Վահան Տերյան

Անտրտնջություն

Արծաթաշող առուն առվին
Ձայն է տալիս ու երգում,
Անտրտունջ է լալկան ուռին,
Ուռին առվի եզերքում...

Շուրջը դահա գիշեր ու երգ
Հանգի՛ստ, հեքիա՛թ ու երա՛զ.
Կույս-ամպերը ճերմակ ու մերկ,
Աստղերն անո՛ւշ, հեզանա՛զ:

Սիրտ իմ հոգնած, մեղմ օրհներգիր,
Հնազանդ ու ցնորուն,
Երկինք ու ծով, ամպ ու երկիր,
Այս մարգերն ու այս առուն:

Եղիր դու էլ պայծառ ու հեզ.
Հեքիա՛թ, հանգի՛ստ ու երա՛զ,
Ծաղկանց ու կույս ամպերի պես,
Աստղերի պես հեզանազ...

Արծաթաշող առուն առվին
Ձայն է տալիս ու երգում,
Անտրտունջ է լալկան ուռին,

Ուռին առվի եզերքում...